ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Քաղաքացիական գործ թիվ **ԵԴ/41417/02/21**
2025թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳՈՐԾԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«25» հունիսի 2025թ. ք. Երևան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

նախագահող Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
զեկուցող Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
Ա. ԱԹԱԲԵԿՅԱՆ
Ն. ՀՈՎՍԵՓՅԱՆ
Ս. ՄԵՂՐՅԱՆ
Վ. ՔՈՉԱՐՅԱՆ

քննարկելով ըստ Լիլիթ Մրրիկյանի հայցի ընդդեմ «Արմսվիսբանկ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Բանկ) և Կադաստրի կոմիտեի, պատասխանողի կողմում ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ Ռոբերտ Սանոյան՝ առոչինչ գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու և գրավի իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, թիվ ԵԴ/41417/02/21 քաղաքացիական գործի ենթակայության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Սույն գործով 15.09.2021 թվականին դիմելով դատարան՝ Լիլիթ Մրրիկյանը պահանջել է կիրառել առոչինչ գործարքի անվավերության հետևանքներ և անվավեր ճանաչել Երևան քաղաքի Կենտրոն, Սայաթ-Նովա 21-րդ շենքի թիվ 46 հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ Բանկի գրավի իրավունքի պետական գրանցումը:

Սնանկության դատարանի (դատավոր Ա. Աթաբեկյան) 03.06.2019 թվականի վճռով Ռոբերտ Սանոյանը ճանաչվել է սնանկ (սնանկության գործ թիվ ԵԴ/0742/04/18):

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Լ. Սաղոյանը 28.02.2024 թվականին որոշում է կայացրել քաղաքացիական գործը Սնանկության դատարանի քննությանը հանձնելու մասին՝ պատճառաբանելով, որ.

«թիվ ԵԴ/0742/04/18 սնանկության գործը, որի շրջանակում պարտապան է հանդիսանում սույն քաղաքացիական գործով վիճարկվող գրավի պայմանագրի կողմ հանդիսացող Ռոբերտ Սանոյանը, հարուցվել է մինչև ««Սնանկության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2019 թվականի դեկտեմբերի 12-ին ընդունված և 2020 թվականի ապրիլի 15-ին ուժի մեջ մտած թիվ ՀՕ-294-Ն ՀՀ օրենքն ուժի մեջ մտնելը: (...) մինչև

2020 թվականի ապրիլի 15-ը գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սնանկության գործով պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների առնչությամբ ծագած բոլոր քաղաքացիաիրավական վեճերը, որտեղ պարտապանը հանդես է գալիս որպես պատասխանող կամ պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ, քննվում են նույն սնանկության գործի շրջանակում:

(...) գործի նյութերով հիմնավորվել է նաև, որ պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ Ռոբերտ Սանոյանը ՀՀ սնանկության դատարանի (դատավոր՝ Ա. Աթաբեկյան) 03.06.2019 թվականի թիվ ԵԴ/0742/04/18 օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է սնանկ: (...) սնանկության գործը (...) դեռևս գտնվում է քննության փուլում:

Նման պայմաններում Դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական գործը սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների առնչությամբ ծագած քաղաքացիական գործ է, որը ենթակա է քննության ՀՀ սնանկության դատարանում»:

Սնանկության դատարանը (դատավոր Ի. Բարսեղյան) թիվ ԵԴ/41417/02/21 քաղաքացիական գործը վարույթ է ընդունել 05.04.2024 թվականին:

Սնանկության դատարանի 17.04.2025 թվականի որոշմամբ սնանկության գործի վարույթը կարճվել է:

Սնանկության դատարանի դատավոր Ի. Բարսեղյանը 19.05.2025 թվականին որոշում է կայացրել քաղաքացիական գործը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի քննությանը հանձնելու մասին՝ պատճառաբանելով, որ.

««Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ (...): Նշված նորմի բովանդակային վերլուծությունից հետևում է, որ նշված հոդվածով սահմանված քաղաքացիական գործերը կարող են քննվել սնանկության գործի շրջանակներում և սնանկության գործի առկայության պայմաններում:

(...) ՀՀ սնանկության դատարանի 17.04.2025 թվականի վճռով Ռոբերտ Սանոյանի սնանկության վերաբերյալ թիվ ԵԴ/0742/04/18 գործի վարույթը իրավահաջորդության բացառման հիմքով կարճվել է (պարտապան Ռոբերտ Սանոյանի մահվան վերաբերյալ 03.04.2025 թվականին կատարված թիվ 888/7460/2025 ակտային գրանցումը):

Փաստորեն թիվ ԵԴ/41417/02/21 քաղաքացիական գործը ՀՀ սնանկության դատարանի վարույթում է գտնվում թիվ ԵԴ/0742/04/18 սնանկության գործի շրջանակներում քննելու համար, մինչդեռ թիվ ԵԴ/0742/04/18 սնանկության գործը պարտապանի իրավահաջորդության բացառման հիմքով կարճվել է: Վերոգրյալով պայմանավորված, Դատարանը գտնում է, որ (...) սույն քաղաքացիական գործի քննությունը շարունակելու իրավական հնարավորությունը բացակայում է և «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի հիմքով այն այլևս ենթակա չէ քննության ՀՀ սնանկության դատարանում, ուստի պետք է թիվ ԵԴ/41417/02/21 քաղաքացիական գործն ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ սահմանված կարգով հետագա ընթացքը լուծելու համար»:

Գործն ստացվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում և 06.06.2025 թվականին հանձնվել է նույն դատարանի դատավոր Ա. Շիլաջյանին:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ա. Շիլաջյանը, համաձայն չլինելով գործի ենթակայությանը, 13.06.2025 թվականին որոշում է կայացրել գործի ենթակայությունը որոշելու համար թիվ ԵԴ/41417/02/21 քաղաքացիական գործը ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատին ուղարկելու մասին այն պատճառաբանությամբ, որ.

««Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ սնանկության գործն ավարտվելու դեպքում առանձին քաղաքացիական գործերի քննությունը շարունակվում է,

եթե առկա չեն այդ գործերի վարույթը կարճելու կամ այդ գործերով հայցը առանց քննության թողնելու հիմքեր:

Վերոնշյալ նորմի վերլուծությունից հետևում է, որ Սնանկության դատարանը շարունակում է առանձին քաղաքացիական գործերի քննությունը նույնիսկ այն պարագայում, երբ սնանկության գործն ըստ էության ավարտվել է (տվյալ դեպքում կարճվել է):

Ուստի թիվ ԵԴ/0742/04/18 սնանկության գործի վարույթը կարճելու մասին որոշման առկայությունը չէր կարող հիմք հանդիսանալ թիվ ԵԴ/41417/02/21 քաղաքացիական գործը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի քննությանը հանձնելու համար, քանի որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 7-րդ մասի դրույթներն ուղղակիորեն նախատեսում են առանձին քաղաքացիական գործերի քննության ենթակայությունը Սնանկության դատարանին: Ավելին՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 10-րդ մասը նախատեսում է, որ այն դեպքում, երբ առանձին քաղաքացիական գործով կայացված՝ դատարանի դատական ակտը բեկանվում և գործն ուղարկվում է նոր քննության, ապա կրկին ենթակա է քննության Սնանկության դատարանին: (...)»:

Թիվ ԵԴ/41417/02/21 քաղաքացիական գործը Վճռաբեկ դատարանում ստացվել և դատական կազմին է հանձնվել 19.06.2025 թվականին:

Վճռաբեկ դատարանը, քննելով թիվ ԵԴ/41417/02/21 քաղաքացիական գործի ենթակայության հարցը, արձանագրում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիական գործերը ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում, բացառությամբ «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի և հակակոռուպցիոն դատարանին ենթակա գործերի:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանը գործը հանձնում է սնանկության դատարանի քննությանը, եթե գործը քննելիս պարզվել է, որ այն ենթակա է քննության սնանկության դատարանում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործն ըստ տարածքային ընդդատության կամ սնանկության դատարանից ըստ ենթակայության ստացած դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում այն վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատ ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի տարածքային ընդդատությանը կամ ենթակայությանը:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-3-րդ մասերով նախատեսված դեպքերում դատավորը ենթակայության հարցի որոշման համար գործը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին կայացված որոշումը ուղարկում է գործին մասնակցող անձանց, որոնք այն ստանալու պահից եռօրյա ժամկետում կարող են գործի ենթակայության վերաբերյալ դիրքորոշում ներկայացնել Վճռաբեկ դատարան:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը գործը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում որոշում է գործի ընդդատությունը կամ ենթակայությունը:

Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածով սահմանված կարգով որոշված դատարանը համարվում է իրավասու դատարան:

Վկայակոչված նորմերից հետևում է, որ գործն ըստ տարածքային ընդդատության կամ ըստ ենթակայության ստացած դատարանը գործի տարածքային ընդդատությանը կամ ենթակայությանը համաձայն չլինելու դեպքում յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում գործը Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատ ուղարկելու մասին՝ այդ որոշումն ուղարկելով գործին մասնակցող անձանց, որոնք այն ստանալու պահից՝ եռօրյա ժամկետում, կարող են գործի ենթակայության վերաբերյալ դիրքորոշում ներկայացնել Վճռաբեկ դատարան:

Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը գործն ստանալու պահից՝ հնգօրյա ժամկետում, որոշում է գործի ընդդատությունը կամ ենթակայությունը: Ընդ որում, Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի որոշած դատարանը համարվում է իրավասու դատարան:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սնանկության գործերի վարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության սնանկության դատարանում (...):

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների, երրորդ անձին պատկանող ապահովված իրավունքի առարկայի, պարտապանի և պարտատիրոջ մասնակցությամբ կնքված, ներառյալ՝ պարտավորությունների կատարման ապահովման միջոցների պայմանագրերի առնչությամբ ծագած և սնանկ ճանաչելու հարցի լուծման կամ պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա ազդող վեճերով քաղաքացիական գործերը, բացառությամբ կառավարչի կողմից ներկայացվող հայցերով կամ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման» մասին Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա ներկայացվող հայցերով հարուցվող քաղաքացիական գործերի, քննում է սնանկության գործը վարող դատավորը նույն սնանկության գործի շրջանակում՝ որպես առանձին քաղաքացիական գործեր (այսուհետ՝ առանձին քաղաքացիական գործեր): Նույն մասով սահմանված՝ պարտապանի և պարտատիրոջ մասնակցությամբ կնքված, ներառյալ՝ պարտավորությունների կատարման ապահովման միջոցների պայմանագրերի առնչությամբ ծագած վեճը ենթակա է քննության սնանկության դատարանում որպես առանձին քաղաքացիական գործ՝ անկախ պարտապանի սնանկ ճանաչված լինելու հանգամանքից:

Վերոգրյալ իրավական նորմերի վերլուծությունից հետևում է, որ քաղաքացիաիրավական վեճը սնանկության գործը վարող դատավորի կողմից նույն սնանկության գործի շրջանակում՝ որպես առանձին քաղաքացիական գործ ենթակա է քննության միայն հետևյալ երկու պայմանների միաժամանակյա առկայության դեպքում՝

1. քաղաքացիական գործով վեճը պետք է ծագած լինի՝

ա) կամ սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների վերաբերյալ,

բ) կամ երրորդ անձին պատկանող ապահովված իրավունքի առարկայի վերաբերյալ,

գ) կամ պարտապանի և պարտատիրոջ մասնակցությամբ կնքված, ներառյալ՝ պարտավորությունների կատարման ապահովման միջոցների պայմանագրերի առնչությամբ, անկախ պարտապանի սնանկ ճանաչված լինելու հանգամանքից, բացառությամբ սնանկության գործով կառավարչի կողմից ներկայացվող հայցերից կամ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի հիման վրա ներկայացվող հայցերով հարուցվող քաղաքացիական գործերից.

2. նշված յուրաքանչյուր դեպքում քաղաքացիական գործով ծագած վեճը պետք է ազդեցություն ունենա սնանկ ճանաչելու հարցի լուծման կամ պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա:

Միաժամանակ, «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 7-րդ մասը սահմանում է, որ սնանկության գործն ավարտվելու դեպքում առանձին քաղաքացիական գործերի քննությունը շարունակվում է, եթե առկա չեն այդ գործերի վարույթը կարճելու կամ այդ գործերով հայցը առանց քննության թողնելու հիմքեր:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ առանձին քաղաքացիական գործերը սնանկության վարույթում կենտրոնացնելու և քննելու անհրաժեշտությունը պայմանավորված է արդյունավետ դատավարական ընթացակարգեր կիրառելու անհրաժեշտությամբ, որն ուղղակիորեն պայմանավորված է նվազագույն ծախսերի կատարմամբ գործերը ողջամիտ

ժամկետում քննելու Սահմանադրությամբ և «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով ամրագրված պահանջով:

Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 7-րդ մասի հատուկ կարգավորումը, անհրաժեշտ է համարում նշել, որ սնանկության գործի ավարտն ինքնին դրա շրջանակում քննվող առանձին քաղաքացիական գործն այլ դատարանի քննությանը հանձնելու հիմք չէ:

Սնանկության գործն ավարտվելու դեպքում դրա շրջանակում քննվող քաղաքացիական գործն այլ դատարանի քննությանը հանձնելու իրավական հիմք «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածը չի սահմանում:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 7-րդ մասի կարգավորումը բխում է դատավարական խնայողության սկզբունքից, քանի որ սնանկության վարույթի ավարտի հիմքով դրա շրջանակում առանձին քննվող քաղաքացիական գործերի հանձնումն այլ դատարանին կհանգեցնի նվազագույն ծախսերի կատարմամբ գործը ողջամիտ ժամկետում քննելու պահանջի խախտման:

Հետևաբար «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 7-րդ մասի հիմքով սնանկության գործի շրջանակում քննվող առանձին քաղաքացիական գործերը շարունակվում են, և իրավասու դատարան է հանդիսանում Սնանկության դատարանը՝ անկախ սնանկության գործն ավարտվելու հանգամանքից, եթե առկա չեն նույն մասով նախատեսված բացառությունները:

Ավելին՝ նկատի ունենալով, որ սնանկության գործերն առաջին ատյանի դատարանում վարվում են դատավորի կողմից միանձնյա, հետևաբար գործը ենթակա է քննության հենց սնանկության գործը վարող դատավորի կողմից:

Սույն քաղաքացիական գործով դիմելով դատարան՝ Լիլիթ Մրրիկյանը պահանջել է կիրառել առոչինչ գործարքի անվավերության հետևանքներ և անվավեր ճանաչել Երևան քաղաքի Կենտրոն, Սայաթ-Նովա 21-րդ շենքի թիվ 46 հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ Բանկի գրավի իրավունքի պետական գրանցումը:

Որպես պատասխանողի կողմում ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ հանդես եկող Ռոբերտ Սանոյանը Սնանկության դատարանի 03.06.2019 թվականի վճռով ճանաչվել է սնանկ, իսկ արդեն 17.04.2025 թվականի որոշմամբ սնանկության գործի վարույթը կարճվել է Ռոբերտ Սանոյանի մահվան հիմքով իրավահաջորդության բացառման պատճառաբանությամբ:

Ընդհանուր իրավասության դատարանից պարտապան Ռոբերտ Սանոյանի մասնակցությամբ հարուցված քաղաքացիական գործն ստացած և գործը վարույթ ընդունած Սնանկության դատարանը (դատավոր Ի. Բարսեղյան) որոշում է կայացրել քաղաքացիական գործն ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի քննությանը հանձնելու մասին ***բացառապես*** այն պատճառաբանությամբ, որ *պարտապան Ռոբերտ Սանոյանը մահացել է, թիվ ԵԴ/0742/04/18 սնանկության գործի վարույթը իրավահաջորդության բացառման հիմքով կարճվել է, և սույն քաղաքացիական գործի քննությունը շարունակելու իրավական հնարավորությունը բացակայում է:*

Մինչդեռ Սնանկության դատարանն անտեսել է, որ թիվ ԵԴ/0742/04/18 սնանկության գործի ավարտի հիմքով դրա շրջանակում առանձին քննվող քաղաքացիական գործը քաղաքացիական դատարանին փոխանցելու հիմքերը տվյալ դեպքում բացակայում են: Հետևաբար «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 7-րդ մասի հիմքով սնանկության գործի շրջանակում առանձին քննվող սույն քաղաքացիական գործը քննող իրավասու դատարան է Սնանկության դատարանը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ թիվ ԵԴ/41417/02/21 քաղաքացիական գործն ըստ Լիլիթ Մրրիկյանի հայցի ընդդեմ «Արմսվիսբանկ» փակ բաժնետիրական ընկերության և Կադաստրի կոմիտեի, պատասխանողի կողմում ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ Ռոբերտ Սանոյան՝ առոչինչ գործարքի անվավերության

հետևանքներ կիրառելու և գրավի իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, ենթակա է քննության Սնանկության դատարանում:

Վերոգրյալի հաշվառմամբ և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Թիվ ԵԴ/41417/02/21 քաղաքացիական գործն ըստ Լիլիթ Մրրիկյանի հայցի ընդդեմ «Արմսվիսբանկ» փակ բաժնետիրական ընկերության և Կադաստրի կոմիտեի, պատասխանողի կողմում ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ Ռոբերտ Սանոյան՝ առոչինչ գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու և գրավի իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, ենթակա է Սնանկության դատարանի քննությանը:
2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող _____ ***Գ. ՀԱԿՈԲՅԱՆ***

Զեկուցող _____ ***Ա. ՄԿՐՏՉՅԱՆ***

_____ ***Ա. ԱԹԱԲԵԿՅԱՆ***

_____ ***Ն. ՀՈՎՍԵՓՅԱՆ***

_____ ***Ս. ՄԵՂՐՅԱՆ***

_____ ***Վ. ՔՈՉԱՐՅԱՆ***